ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

2024թ. հունվար- հոկտեմբեր

1. Տնտեսական ակտիվության ցուցանիշ

Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2024 թվականի հունվար-հոկտեմբերին կազմել է 8.1%, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ նվազել է 1.1 տոկոսային կետով:

Տնտեսական ակտիվության ցուցանիշ, %



2. Ծառայություններ

- Ծառայությունների ծավալի աճը կազմել է 5.8%, ինչն ավելի ցածր է, քան 2023թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Ծառայությունների աճին դրական են նպաստել հետևյալ ենթատեսակները. ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտը՝ 5.6 տոկոսային կետով (տ/կ), կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտը՝ 0.8 տ/կ, մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեության ոլորտը՝ 0.6 տ/կ, անշարժ գույքի հետ կապված գործունեության ոլորտը՝ 0.5 տ/կ, մշակույթ, զվարճություն և հանգստի ոլորտը՝ 1.1 տ/կ, առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկման ոլորտը՝ 0.4 տ/կ, վարչարարական և օժանդակ գործունեության ոլորտը 0.2 տ/կ, կրթության ոլորտը՝ 0.1 տ/կ, և սպասարկման այլ ծառայությունների ոլորտը՝ 0.1 տ/կ:
- Բացասական ազդեցություն են ունեցել տրանսպորտ՝ -1.7 տ/կ և տեղեկատվություն ու կապ -1.8 տ/կ ծառայության տեսակները:

Ծառայությունների ծավալի աճ, %



3. Առևտրի շրջանառություն

- Ներքին առևտրի շրջանառության ծավալի աճը կազմել է 18.8%, ինչն ավելի ցածր է, քան 2023թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Առևտրի շրջանառությանը դրական են նպաստել. մանրածախ առևտրի և մեծածախ առևտրի ոլորտներում գրանցված համապատասխանաբար՝ 8.5% և 26.3% աճերը:
- Բացասական ազդեցություն է ունեցել ավտոմեքենաների առևտրի ոլորտի -6.3% կրճատումը:

Ներքին առևտրի շրջանառության աճ, %



4. Շինարարություն

- Շինարարության ծավալի աճը կազմել է 15.5%: Աճին դրական են նպաստել՝ պետական բյուջեի միջոցներով իրականացվող շինարարության 19.5% աճը, այդ թվում՝ միջազգային վարկերի հաշվին շինարարության ծավալի 60.7% աճը (որից՝ համաշխարհային բանկի միջոցները՝ 6.0%, ՎԶԲ-ն՝ 6.6 անգամ, ԱԶԲ-ն՝ 91.5%, ԳԶԲ-ն՝ 56.5%, ԵՆԲ-ն՝ 31.0%) և բնակչության միջոցներով իրականացվող շինարարության 58.8% աճ:

- Բացասական ազդեցություն են ունեցել համայնքների միջոցներով իրականացված շինարարության -11.8%, մարդասիրական օգնության միջոցներով -5.4%: Իսկ կազմակերպությունների միջոցներով գրանցվել է աճ 3.9%:

Շինարարության ծավալի աճ, %



Արտաքին առևտրաշրջանառության ծավալը հաշվետու ժամանակաատվածում կազմել է 26,232.8 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 67.6%, որից արտահանման ծավալը կազմել է 11,550.6 մլն ԱՄՆ դոլար, աճը՝ 95.1%, իսկ ներմուծումը՝ 14,681.4 ԱՄՆ դոլար, աճը 50.8%:

5. Արտաքին առևտուր

5.1 Արտահանում

Ըստ երկրների խմբի աճ է գրանցվել միայն այլ երկրների գծով՝ 4.0 անգամ: Կրճատում են գրանցել ԵԱՏՄ երկրները՝ -13.7%, ԵՄ երկրները՝ -22.3%-ով, և ԱՊՀ երկրները՝ -13.5%:

- Արտահանման աճին դրական են նպաստել հետևյալ ապրանքախմբերի աճերը. կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք աճը՝ 33.9%, բուսական ծագման արտադրանք, աճը՝ 26.0%, հանքահումքային արտադրանք՝ 13.9%, կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ 10.2%, թուղթ և թղթից իրեր՝ 18.0%, մանածագործական իրեր՝ 6.7%, իրեր քարից, գիպսից, ցեմենտից՝ 13.2%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր՝ 5.4 անգամ, պատրաստի սննդի արտադրանք՝ 5.0%, կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ 11.5%, տարբեր արդյունաբերական ապրանքներ՝ 9.4%, արվեստի ստեղծագործություններ՝ 28.1%:

- Բացասական ազդեցություն են ունեցել՝ կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր՝ -3.9%, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք՝ -18.4%, պլաստմասսա և դրանից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր՝ -19.0%, փայտ և փայտյա իրեր՝ -78.6%, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ -30.5%, մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ՝ -3.7%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ՝ -77.3%, սարքեր և ապարատներ՝ -1.4%:

Արտահանման ծավալի աճ



Արտահանման կառուցվածքն ըստ երկրների խմբերի, %



5.2 Ներմուծում

- Ըստ երկրների խմբի աճ է գրանցվել միայն ԱՊՀ երկրների գծով (2.9 անգամ), որից ԵԱՏՄ-ն՝ 2.9 անգամ: ԵՄ երկրների ներմուծումը կրճատվել է -12.5%-ով, իսկ Այլ երկրները՝ -9.8%-ով:

- Ներմուծման ծավալի աճը կազմում է 50.8%, ինչն ավելի բարձր է, քան 2023թ. նույն ժ/շ ցուցանիշը:
- Աճին դրական են նպաստել կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանքը՝ 10.5%, բուսական ծագման արտադրանք՝ 2.7%, կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր՝ 3.4%, պատրաստի սննդի արտադրանքը՝ 18.1%, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքը՝ 2.4%, կաշվի հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր՝ 15.5%, մանածագործական իրեր՝ 6.3%, փայտ և փայտյա իրեր՝ 5.2%, իրեր քարից, գիպսից, ցեմենտից՝ 6.0%, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր՝ 5.1 անգամ, ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ 0.9%, մեքենաների սարքավորումներ և մեխանիզմներ՝ 3.4%, սարքեր և ապարատներ՝ 3.3%, տարբեր արդյունաբերական ապրանքներ՝ 20.8%:
- Բացասական ցուցանիշներ են գրանցել՝ հանքահումքային արտադրանքը՝ -1.5%, պլաստմասսա և դրանցից իրեր, կաուչուկ և ռետինե իրեր՝ -5.6%, կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ՝ -2.9%, վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտային միջոցներ՝ -51.0%, արվեստի ստեղծագործություններ՝ -60.2%:

Ներմուծման ծավալի աճ



Ներմուծման կառուցվածքն ըստ երկրների խմբերի, %



6. Արդյունաբերություն

- Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը կազմել է 11.7%: Հիմնական ճյուղերից աճ է գրանցել. մշակող արդյունաբերությունը՝ 17.3%, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարումը՝ 12.4%, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակումը՝ 5.5%: Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործումը նվազել է -8.1%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի աճ



6.1 Մշակող արդյունաբերություն

Մշակող արդյունաբերության ծավալում ենթաճյուղերից աճ են գրանցել՝ սննդամթերքի արտադրությունը՝ 3.6%, ծխախոտային արտադրատեսակները՝ 12.9%, մանածագործական արտադրատեսակները՝ 1.3%, փայտանյութի մշակում, բացի կահույքից՝ 24.8%, թղթի և թղթե արտադրատեսակները՝ 3.3%, պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացումը 3.0%, դեղագործական արտադրանքը՝ 6.4%, ռետին և պլաստմասսա՝ 9.8%, հիմնական մետաղները՝ 188.0%, պատրաստի մետաղական արտադրատեսակները՝ 16.3%, համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորումների արտադրութ-յունը՝ 26.9%, էլեկտրական սարքավորանք՝ 60.4%, կահույքի արտադրությունը՝ 25.1%, մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում ՝ 10.3%:

Ի հակադրություն վերոնշյալ ենթաճյուղերի նվազել են՝ կաշվի, կաշվե արտադրատեսակները՝ -8.7%, խմիչքներինը՝ -2.4%, հագուստի արտադրությունը՝ -2.5%, քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրությունը՝ -16.6%, այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը՝ -15.5%, մեքենաների և սարքավորանքի արտադր. չներառված ուրիշ խմբավորումներում՝ -17.4%, այլ տրանսպորտային սարքավորանքի արտադրություն՝ -20.2%, արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում՝ -26.8%:

Մշակող արդյունաբերության ենթաճյուղերի նպաստումը մշակող արդյունաբերության աճին, 2024թ. հունվար-հոկտեմբեր, տոկոսային կետ